ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 21 մայիսի 2008թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը

Նախագահությամբ՝ Հ. Դանիելյանի

Անդամակցությամբ՝ Հ. Նազարյանի

Վ. Պողոսյանի

Քննության առնելով ՀՀ քաղաքացիներ Միքայել, Մաղլենա և Մարիետտա Բաբալյանների դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

Քաղ-եր Միքայել, Մաղլենա և Մարիետտա Բաբալյանները դիմել են Սահմանադրական դատարան, վիճարկելով ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 404 հոդվածի 1-ին մասի, 407 հոդվածի 3-րդ մասի և ՀՀ Դատական օրենսգրքի 13 հոդվածի 6-րդ կետի սահմանադրականությունը:

Դատարանը գտավ, որ ներկայացված դիմումը ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 407 հոդվածի 3-րդ մասի առումով ենթակա է մերժման «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 3-րդ կետի և ՀՀ Սահմանադրական դատարանի Կանոնակարգի 25 հոդվածի 1-ին կետի պահանջներից ելնելով, քանի որ դրա վերաբերյալ առկա է Սահմանադրական դատարանի կողմից կայացված ՍԴՈ-674 որոշումը:

Դատարանը նաև գտավ, որ դիմումը ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 404 հոդվածի 1-ին մասի և ՀՀ Դատական օրենսգրքի 13 հոդվածի 6-րդ կետի առումով համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 6 կետի, Սահմանադրական դատարանի մասին օրենքի 27, 28 հոդվածների եւ 69 հոդվածի 1, 2, 4, 5 կետերի, ինչպես նաև ՀՀ Սահմանադրական դատարանի Կանոնակարգի պահանջներին: Պահպանվել է Սահմանադրական դատարան դիմելու՝ օրենքով նախատեսված ժամկետը:

Դիմողները սպառել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և գտնում են, որ իրենց նկատմամբ կիրառված օրենքի դրույթները հակասում են Սահմանադրությանը:

Դիմողները միջնորդել է իրեն ազատել պետտուրքի վճարումից, որը բավարարման ենթակա է, քանի որ զոհված ազատամարտիկի ընտանիքի անդամներ են և գտնվում են նյութապես խիստ ծանր դրության մեջ;

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին օրենքի 69 հոդվածի 6 կետով, Սահմանադրական դատարանի 2-րդ կազմը

ՈՐՈՇԵՑ

1. Քաղ-եր Միքայել, Մաղլենա և Մարիետտա Բաբալյանների դիմումը՝ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 407 հոդվածի 3-րդ մասի սահմանադրականությունը վիճարկելու մասին, մերժել՝ տրամադրելով նրան ՍԴՈ-674 որոշումը:

2. Քաղ-եր Միքայել, Մաղլենա և Մարիետտա Բաբալյանների դիմումը՝ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 404 հոդվածի 1-ին մասի և ՀՀ Դատական օրենսգրքի 13 հոդվածի 6-րդ կետի սահմանադրականությունը վիճարկելու մասին, ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող ճանաչել ՀՀ Ազգային Ժողովին:

3. Միքայել, Մաղլենա և Մարիետտա Բաբալյաններին ազատել պետտուրքի վճարումից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ